

ԱՀ ԳՆԱՀԱՏՄԱՆ ԵՎ ԹԵՍՏԱԿՈՐՄԱՆ ԿԵՆՏՐՈՆ

ԱՐՏԱՔԻՆ ԸՆԹԱՑԻԿ ԳՆԱՀԱՏՈՒՄ
6 - ՐԴ ԴԱՍԱՐԱՆ

Մ Ա Թ Ե Մ Ա Տ Ի Կ Ա ԹԵՍՏ 4

Շրջան, քաղաք _____

Ուս. հաստատություն _____

Դասարան _____

Ա. Ա. Հ. _____

Ամսաթիվ _____


Սիրելի՛ աշակերտ

Թեստ-գրքույկն ընդգրկում է 22 առաջադրանք:

1, 2-րդ առաջադրանքները լրացնել:

3-6-րդ, 8-15-րդ առաջադրանքներում տրված են պատասխանի տարբերակներ:

Պահանջվում է ճիշտ պատասխանի համարը վերցնել շրջանակի մեջ:

Եթե գտնում եք, որ սխալ եք նշել, շրջանակի վրա դնում եք X նշանը  և նոր շրջանակի մեջ վերցնում ճիշտ պատասխանի համարը:

7-րդ առաջադրանքում կատարել համապատասխանեցում:

16 -21-րդ առաջադրանքներում գրել պատասխանը:

22 -րդ առաջադրանքում անհրաժեշտ է խնդրի լուծման ամբողջ ընթացքը մանրամասն և հիմնավորած ներկայացնել առաջադրանքից հետո հատկացված տեղում: Միայն վերջնական պատասխանի գրառման դեպքում միավոր չի տրվում:

1-22 -րդ յուրաքանչյուր առաջադրանքի ճիշտ պատասխան գնահատվում է 1 միավոր, սխալը՝ 0:

Թեստի առավելագույն միավորը՝ 22:

Թեստ - գրքույկի էջերի ազատ մասերը կարող եք օգտագործել սևագրության համար:

Աշխատանքի կատարման համար տրվում է 60 րոպե:

Ցանկանում ենք հաջողություն

1-2-րդ առաջադրանքները լրացնել

1. Ամբողջ դրական և բացասական թվերն ու զրոն ունեն ընդհանուր անվանում՝ _____:
2. Երկու մեծությունների քանորդը անվանում են _____:

3-6-րդ առաջադրանքների ճիշտ պատասխանի համարը վերցնել շրջանակի մեջ

3. Անհնար իրադարձություն է՝
 - 1) Հավաքակայանում միայն մեքենաներ կան: Այնտեղից դուրս է գալիս մի տրակտոր:
 - 2) Թիվը 5 -ի բաժանելիս մնացորդում ստացվում է 2:
 - 3) Ղասը սկսվել է: Ղա մաթեմատիկայի դաս է:
 - 4) Բնական թվերի մեջ կան կենտ թվեր:
4. Հանդիսանում է արդյո՞ք $27:32 = 45:53$ հավասարությունը համեմատություն.
 - 1) այո
 - 2) ոչ
5. $x = 50$ և $y = 2\frac{1}{2}$ մեծությունները հակադարձ համեմատական են: Այդ դեպքում համեմատականության գործակիցն է՝
 - 1) $\frac{1}{125}$
 - 2) $\frac{1}{20}$
 - 3) 125
 - 4) 20
6. Տուփում կա 4 կարմիր և 6 սպիտակ գնդիկ: Տուփից հանում են պատահական գնդիկ: Սպիտակ գնդիկ դուրս գալու հավանականությունն է՝
 - 1) $\frac{3}{5}$
 - 2) $\frac{2}{5}$
 - 3) $\frac{1}{10}$
 - 4) $\frac{1}{6}$

7-րդ առաջադրանքում կատարել համապատասխանեցում

- | | |
|-----------------------------------|-------------------|
| 7. Համեմատություն | Անհայտ թիվ |
| 1) $65:15 = x:27$ | Ա) 117 |
| 2) $\frac{15}{7} = \frac{3x}{56}$ | Բ) $\frac{13}{9}$ |
| | Գ) 120 |
| | Դ) 40 |

Պատ՝ 1) _____, 2) _____


8 -15-րդ առաջադրանքներում ճիշտ պատասխանի համարը վերցնել շրջանակի մեջ

8. Կոնգո գետն ունի 4320 կմ երկարություն: Այդ գետի պատկերումը 1:25000000 մասշտաբով քարտեզի վրա կլինի՝
 - 1) $16\frac{7}{25}$ սմ
 - 2) $17\frac{6}{25}$ սմ
 - 3) $17\frac{7}{25}$ սմ
 - 4) 17 սմ
9. $\frac{3}{2} : \frac{3}{14} = 3\frac{1}{9} : \frac{4}{9}$ համեմատության միջին անդամների արտադրյալն է՝
 - 1) $\frac{2}{3}$
 - 2) $\frac{9}{28}$
 - 3) $\frac{3}{2}$
 - 4) 7
10. 150 թվի 2:3 բաժանման մասերն են՝
 - 1) 80 և 70
 - 2) 100 և 50
 - 3) 120 և 30
 - 4) 60 և 90
11. 45 րոպեն ժամի ո՞ր տոկոսն է կազմում.
 - 1) 25%
 - 2) 75%
 - 3) 50 %
 - 4) 30 %

12. Հեծանվորդը անցավ ճանապարհի 30% -ը, որը կազմում է 90 կմ: Ամբողջ ճանապարհն է՝
- 1) 300 կմ 2) 27 կմ 3) 210 կմ 4) $128\frac{4}{7}$ կմ
13. Պահեստում կար 1500 կգ մթերք, որից տարան 35% -ը: Տարած մթերքի քանակն է՝
- 1) 975 կգ 2) 500 կգ 3) 525 կգ 4) 1000 կգ
14. a, b, c, d թվերն այնպիսին են, որ $\frac{a}{b} = \frac{c}{d}$: Դրանից հետևում է՝
- 1) $\frac{b}{a} = \frac{c}{d}$ 2) $\frac{b}{d} = \frac{a}{c}$ 3) $\frac{d}{c} = \frac{a}{b}$ 4) $\frac{b}{c} = \frac{d}{a}$
15. Պարզ թիվ է՞ $13 \cdot 23 \cdot 33 \cdot 43 + 23$ արտահայտության արժեքը.
- 1) այո 2) ոչ


16-21-րդ առաջադրանքներում գրել պատասխանը

16. Նկարում պատկերված է գրասաշրջիկի շարժման գրաֆիկը: Տնից դուրս գալուց քանի՞ ժամ անց գրասաշրջիկը կգտնվի տնից 16 կմ հեռավորության վրա:



Պատասխան _____

17. Սյունակաձև դիագրամում ցույց է տրված խանութում վաճառված մրգի քանակը հունիս և հուլիս ամիսներին: Որքանո՞վ ավել խնձոր է վաճառվել ժիրանից այդ ամիսներին:



Պատասխան _____

18. Գտնել արտահայտության արժեքը $4 \cdot \left(\frac{9}{10} - \frac{4}{15}\right) : 3\frac{1}{6} + 1\frac{1}{10}$

Պատասխան _____

19. 10 մ կտորի համար վճարեցին 30000 դրամ: Որքա՞ն պետք է վճարել 17 մ այդպիսի կտորի համար:

Պատասխան _____

20. Երկու ուղղանկյուն ունեն նույն մակերեսը: Դրանցից մեկի երկարությունը 25 սմ է, իսկ լայնությունը՝ 18 սմ: Մյուս ուղղանկյան լայնությունը 15 սմ է: Ինչքա՞ն է երկրորդ ուղղանկյան երկարությունը:

Պատասխան _____

21. Չորս հաջորդական թվերի գումարը 74 է: Գտնել այդ թվերից ամենամեծը:

Պատասխան _____

22-րդ խնդրի լուծման ամբողջ ընթացքը մանրամասն և հիմնավորած ներկայացնել առաջադրանքից հետո հատկացված տեղում

Ջրոսաշրջիկը 6 ժամ հեծանիվով գնացել է 20 կմ/ժ արագությամբ և մի քանի ժամ ավտոբուսով՝ 60 կմ/ժ արագությամբ: Քանի՞ ժամ է զբոսաշրջիկը գնացել ավտոբուսով, եթե անցել է ընդամենը 540 կմ:

Լրացնում է ստուգողը

Ընդհանուր միավորը	
Գնահատականը 10 բալանոց սանդղակով	

Ստուգող՝ _____
Ա.Ա.Հ.

_____ ստորագրությունը